

7703 պատարով և 133,827 համայնք: Հաղորդողներն թիւը
 1905 խուին եղել է 1,842,339 հոգի: Պետութիւնից բոլորովն
 անկախ ծխական դպրոցներն թիւը 4399 է, ուսուցիչներն թիւը
 2668, իսկ աշակերաններն՝ 245,524 հոգի: Կիրակնօրեայ դպրոց-
 ներն թիւը 6667 է, որոնց պաշտօնեաներն և ուսուցիչներն՝
 67,233, իսկ աշակերաններն՝ 664,693: Եկեղեցական վարչութիւն-
 ները առաքելութեան և ուրիշ նպատակների համար նուէր են
 հաւաքել 1,622,105 դոլար: Նոքա 24 աստուածաբանական սե-
 մինար ունին, 41 կողէջ, 38 ճեմարան, աղջկանց բարձր դպրոց՝
 10, հիւանդանոց՝ 25, որբանոցներ՝ 48, ծերունիների ապաստա-
 բաններ և ապահովաններ՝ 20, հիւանդապահութեան դպրոցներ
 կամ սարկաւազանոցներ՝ 8: Շրջիկ և ծովային առաքելութիւն-
 ներն թիւը 13, իսկ հեթանոսների մէջ աւետարան քարոզողնե-
 րն՝ 10, լութերական լրագիրներն թիւը 70, շհաշուելով կիրակ-
 նօրեայ դպրոցներն 26 թերթերը: Բարեգործական և կրթական
 դործի համար ծախսոււմ է 12,184,166 դոլար: Մատենադարան-
 ներ ունին, որոնց մէջ հաւաքուած են 424,926 հատոր գիրք:
 Բարձր դպոցների ուսուցչապետների թիւը 945 է, ուսանողնե-
 րն՝ 12970, որոնցից 1624 հոգի արդէն քարոզչութեան պաշ-
 տօնի համար են պատրաստոււմ: Սորա վերայ պիտի աւելացնել
 1903 ուսանողուհիներ: Բարբերարուած են հաստատութիւններից
 31,691 հոգի:

Ահա թուեր, որոնք ցոյց են տալիս, թէ ի՞նչպիսի մեծ
 և կենդանի ոյժ է լութերականութիւնը հիւսիսային Գերմա-
 նիայում, մանաւանդ որ այս դաւանութեան պատկանող-
 ներից շատերը ցրուած են այստեղ և այնտեղ և համայնք չեն
 կազմոււմ: Այս տեղեկութիւնները հանուած են Chronik der
 Christ. Welt թերթից:

Ա Ն Դ Ղ Ի Ա

Անգղիայում վերջին տարիները լուրջ կերպով աշխատում
 են, որ կիրակէն սուրբ պահեն: Այս հարցում միացել են քրիս-
 տոնէական եկեղեցու բոլոր պետերը, թէ անգղիական, թէ ձու-
 մէական և թէ ազատ աւետարանական. այս մի նշանաւոր
 երևոյթ է: Յունուարի մէկին յիշեալ եկեղեցիների արքեպիսկո-
 պոսները (Կենտրոնների, անգղ. Կաթողիկ.) և ազատ աւետարա-
 նական ազգային եկեղեցու նախագահը դիմել են անգղիացւոց
 հետեւեալ հաւաքական թղթով:

«Ինչպէս քրիստոնէական համայնքի ներկայացուցիչներ՝ ցանկանում ենք ձեր ուշադրութիւնը դարձնել այն միացեալ ջանքի վերայ, որ անհրաժեշտ է հաստատելու համար կիւրակէ օրը սուրբ պահելու սկզբունքը:

Մենք ժողովրդի բարեկեցութեան համար սրանից մեծ սկզբունք չենք գտնում: Եօթն օրերից հանգստեան մի օրը մեծապէս նպաստում է մարմնոյ և հոգու կազդուրման և արդիւնաւոր լինելուն և գարձնում է ընտանեկան կեանքը աւելի քաղցր:

Այս օրը Աստուած է սրբազործել, որ ամէն ոք միջոց ունենայ ծառայել նորան, ազատուել օրուայ հոգսերից և զբաղուել ազնիւ մտքերով և ցանկութիւններով: Մենք համոզուած ենք, որ կիւրակէի սուրբ պահելը անզղիական կեանքին աւելի խորութիւն, սրբութիւն և բարոյականութիւն կազդէ:

Աւելորդ չի լինիլ յիշել, որ ոչ մի երկիր, ոչ մի ազգ ներկայումս այնպէս սուրբ չի պահում կիւրակէն, ինչպէս Անգղիան: Վեց ու կէս միլիոն բնակիչ ունեցող Լոնդոնը, ուր լուր օրերին երթեկեկութիւնը մի վարար գետի հոսանք է ներկայացնում, կիւրակէ օրը ասես մեռնում է. փողոցները դատարկուում, կրպակները մեծ ու փոքր փակուում, կեանքը բառիս բուն նշանակութեամբ փողոցներում դադարում: Վայց ինչպէս տեսնում ենք, այդ գեռ անբաւարար են համարում եկեղեցու պետերը, գեռ սրոշում մեծ պասից էլ մի շաբաթ (մարտի 10—17 ը) նուիրել աղօթքի և պահքի. և անզղիական ժողովուրդը սկսած լսողեսից մինչև վերջին բանուօրը լսում և գիտակցօրէն կատարում է: Որքան յետամնաց է անզղիական ազգը հայ ազգից և որքան խաւարամիտ անզղիական եկեղեցին. ինչո՞ւ չեկան մի քանի գասեր լսելու մեր 1906 թ. օգոստ. ազգային Կեար. ժողովի ճառախօսներից. ափսո՛ս, :

]]]]]]]]]]

